ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Հայաստանի շախմատի ֆեդերացիայի
Նախագահ
Ս. Սարգսյան
2023 թ.

Հայաստանի կանանց 79-րդ առաջնության
Բարձրագույն խումբ

Կանոնակարգ

Մրցաշարը կանցկացվի հունվարի 11-21-ին Երևանում, Տ.Պետրոսյանի անվան շախմատի տուն-մարզադպրոցի դահլիճում: Այն կանցկացվի համաձայն ՖԻԴԵ-ի շախմատային կանոնների, շրջանաձև մրցակարգով՝ 10 մասնակիցներով:

Մասնակիցները՝ ըստ Հայաստանի շախմատի ֆեդերացիայի կողմից հաստատված կանոնադրության:

Ժամակարգը՝ յուրաքանչյուրին պարտիայում առաջին 40 քայլի համար տրվում է 90 րոպե, հետո 30 րոպե մինչև պարտիայի ավարտը՝ 30 վայրկյան քայլի համար հավելումով սկսած առաջին քայլից:

Պարտիայի սկզբին թույլատրելի ուշացման ժամանակը սահմանված է 15 րոպե:

Հավասար միավորների դեպքում առավելությունը տրվում է համապատասխանաբար ըստ՝

- Զոներորն-Բերգերի համակարգի,
- սև գույնի խաղաքարերով խաղացած պարտիաների առավելագույն թվի,
- անձնական հանդիպման (հանդիպումների) արդյունքի,
- հաղթանակների առավելագույն թվի:

1-ին տեղի համար բոլոր նշված ցուցանիշների հավասարության դեպքում մրցաշարի ավարտի հաջորդ օրը կանցկացվի արագ շախմատի լրացուցիչ մրցամարտ հետևյալ մրցակարգով: Նախ, կանցկացվի 2 պարտիայից բաղկացած մրցամարտ՝ 15 րոպե պարտիայի համար 10-ական վայրկյան յուրաքանչյուր քայլի համար հավելումով: Եթե հավասարությունը պահպանվի, ապա կխաղացվի ևս 2 պարտիայից բաղկացած մրցամարտ՝ 5 րոպե պարտիայի համար 3-ական վայրկյան յուրաքանչյուր քայլի համար հավելումով: Եթե հավասարությունը կրկին պահպանվի, ապա գույնի նոր վիճակահանությունից հետո կխաղացվեն լրացուցիչ պարտիաներ նույն ժամակարգով մինչև առաջին հաղթանակը: Այդ դեպքում յուրաքանչյուր զույգ պարտիայից հետո կկատարվի գույների հերթականության փոփոխություն:

Հայաստանի չեմպիոնը իրավունք կնվաճի 2024 թ. հանդես գալու Հայաստանի ազգային հավաքականի կազմում:

Մրցաշարում 1-3 տեղեր գրաված շախմատիստներն իրավունք կնվաճեն հանդես գալու Հայաստանի 85-րդ առաջնության բարձրագույն խմբի մրցաշարում:

Գլխավոր մրցավար,
միջազգային մրցավար՝ Ա.Վարդապետյան